ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«21» 08 2024թ.
№ ՊԶՊ-Գ24-1335

«ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00498192)
հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ փ. 63/23
հեռ. 044-53-45-56

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-9/5» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն): Մասնակցության հայտի Հավելված 1-ով (ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն) Կազմակերպությունը հավաստել է, որ իրեն փոխկապակցված անձինք բավարարում են Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում Կազմակերպությունը ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, ինչից հետո ՀՀ պաշտպանության նախարարության և Կազմակերպության միջև 17.06.2024թ. կնքվել է ապրանքների մատակարարման ԳՀԱՊՁԲ-24-9/5-7 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը 05/04/2024թ. թիվ Ե/801-24 և 06/08/2024թ. թիվ Ե/1828-24 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել տեղեկատվություն համաձայն որի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները, ինչը տվյալ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Կազմակերպության միջև 17.06.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-9/5-7 գնման պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. օգոստոսի 20-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 489 600 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. օգոստոսի 29-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 489 600 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման գումարը, ապա Կազմակերպությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվին և վճարված կտրոնի բնօրինակը մինչև 2024թ. օգոստոսի 29-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2078 սենյակ:

Միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Կազմակերպության միջև 17.06.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-9/5-7 գնման պայմանագրի 8.3 կետը, տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ ընկերությունից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրով և քանակով Արտիկային (արտիկայինի հիդրոքլորիդ), էպինեֆրին/ադրենալին (էպինեֆրինի հիդրոքլորիդ/ադրենալինի բիտարտրատ) ձեռքբերելու դեպքում Կազմակերպությունը պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագիրը կնքվում է ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ